

ISSN 1829-0531

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐԵՍ

ՀԱՎԵԼՎԱԾ

ՆՎԻՐՎԱԾ ՊՐՈՖԵՍՈՐ ՄԱՐՏԻՆ ԳԻԼԱՎՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

ԵՐԵՎԱՆ 2023

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐԵՍ
АРМЕНОБЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ
JOURNAL FOR ARMENIAN STUDIES

Հիմնադիր՝ «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամ

Խմբագրական խորհուրդ՝

Ս. Ռ. Գևորգյան (նախագահ),

Ա. Վ. Գալստյան (գլխավոր խմբագիր)

Ա. Հ. Հարությունյան (գլխավոր խմբագրի տեղակալ)

Ս. Դ. Դանիելյան, Ա. Գ. Դոլուխանյան, Լ. Ս. Խաչատրյան,
Ա. Հ. Հակոբյան, Վ. Գ. Համբարձումյան, Է. Ս. Մկրտչյան,
Ս. Պ. Մուրադյան, Ա. Տազեայան (Բեյրութ),
Զ. Պողոսյան (Բոստոն), Հ. Մարտիրոսյան (Նիդերլանդներ),
Ա. Հ. Մանուկեան (Շվեյցարիա)

Գրանցման վկայական՝ 211.200.00182

Գրանցման տարեթիվը՝ 26.03.2003 թ.

Պարբերականությունը՝ եռամսյա

Բոլոր նյութերն ուղարկվում են գրախոսության:

Հոդվածները տպագրվում են անվճար: Ցանկացողները հանդեսը կարող են ձեռք բերել համալսարանի հաշվեհամարին (151 000 230 84 80 100) փոխանցելով համարի արժեքը:

Արտատպության դեպքում հղումը «Հայագիտական հանդես»-ին պարտադիր է:

Մեր հասցեն՝ Երևան, Ալեք Մանուկյան փ. 13, հեռախոս՝ 55-60-30 (1-20)

Էլեկտրոնային փոստ՝ hayagitakanhandes@gmail.com

Կայքէջ՝ <https://armenianstudies.aspu.am/>

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՄԱՐԱՆԻ
ՕՐՀՆԵՐԳԸ

Խոսք՝ *Մարտին Գիլավյանի*
Երաժշտ.՝ *Արկաղի Շենունցի*

Ճամփան ես մեր լուսավորում
Դու Մաշտոցի արդար լույսով,
Ու լցնում ես սրտերը մեր
Հավատով ու պայծառ հույսով:

Կրկներգ

*Դու մայր տաճար մեր դպրության,
Դու մեր երթի փարոս մի նոր,
Ճամփան ես մեր լուսավոր
Արությանից մինչ այսօր:*

Ճանապարհը քո փառավոր
Շարունակվի թող հավիտյան,
Կանաչ լինի ու լուսավոր
Մեր հարազատ Համալսարան:

Կրկներգ

*Դու մայր տաճար մեր դպրության,
Դու մեր երթի փարոս մի նոր,
Ճամփան ես մեր լուսավոր,
Արությանից մինչ այսօր:*



ՄԱՐՏԻՆ ԳԻՂԱՎՅԱՆ

ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻ

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՑԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ
Հայ հին և միջնադարյան գրականության և նրա
դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
Բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՆԱ ԱՆՍԱՀՄԱՆ ԿԵՆՍԱՍԵՐ ԷՐ

Դժվար է գրել հիշատակի խոսք, մանավանդ, որ մեզնից հեռացողը սիրված, եռանդուն անձնավորություն էր, ուներ ստեղծագործական ծրագրեր, լի էր լավատեսությամբ ու հանկարծ...

Ասում են, որ մարդն ապրում է այնքան, որքան նրան հիշում են: Այդ առումով Գիլավյանը երկար է ապրելու, որովհետև նա կրթել է ուսանողների բազմաթիվ սերունդներ, ունեցել է տարբեր տարիքի ընկերներ, որովհետև մարդամոտ էր ու ընկերասեր: Առավել ևս նա ապրելու է իր գրքերով ու գործընկերների հուշագրություններով:

Գիլավյանը նաև շատ շնորհալի բանաստեղծ էր. պատահական չէ, որ նա Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ օրհներգի հեղինակն է, որի երաժշտությունը գրել է նույնպես Գորիսի ծնունդ, մեր բուհի սիրված կոմպոզիտոր, պրոֆեսոր Արկաղի Շեկունցը:

Գիլավյանը հիանալի ամուսին ու հայր էր, որը հպարտանում էր իր զավակների, թոռների հաջողություններով ու առաջընթացով:

Գրականագիտական հետաքրքրությունների շրջանակում էր հատկապես հայ նորագույն գրականությունը, որին նվիրվել են նրա մենագրությունները և երկու ատենախոսությունները: Հատկապես պաշտում էր Համո Սահյանին, որին հանդիպել է ուսանողական տարիներից սկսած և մշտապես հիանում էր նրա պոեզիայով: Մարտինին շատերն են պարտական բանասիրական գիտությունների թեկնածու դառնալու համար: Նա հատկապես դեկավարում էր մերօրյա բանաստեղծներին ու արձակագիրներին գնահատելու մղումով: Եվ նրա դեկավարությամբ ատենախոսություններ գրվեցին Հրաչյա Թամրազյանի, Արմեն

Մարտիրոսյանի, Հրաչյա Սարուխանի, Սերո Խանգաղյանի, Ռուբեն Հովսեփյանի և ուրիշների մասին: Այս առումով նա նորարար էր:

2005 թվականից Գիլավյանը ՀՊՄՀ-ի «Հայագիտական հանդեսի» գլխավոր խմբագիրն էր և այդ գործի նվիրյալը:

Նա 1995-ից մինչև 2011 թվականը եղել է բանասիրական ֆակուլտետի անփոփոխ դեկանը: Ուսանողներն ու դասախոսները սիրում էին նրան ու գոհ էին նրա աշխատանքից:

Կարելի է երկար գրել նրա պարգևների մասին, սակայն կարևորը սրտի խոսքն է, և այն ցավը, որ մեր բուհը զրկվեց այդքան ինքնատիպ ու կենսասեր պրոֆեսորից:

ՄՈՒՐԷՆ ԴԱՆԻԷԼԵԱՆ

Վաչէ Պարտիզունու անուան հայ նոր եւ նորագոյն գրականութեան
եւ նրա դասաւանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ
Բ.գ.դ., Պրօֆ.

**ԲԱՅՑ ՀԱԻԱՏԱՆՔ, ՈՐ ԹԵԹԵՒ ԷՐ ԿԵԱՆՔԴ ՈՒ ԽՆՂՈՒՄ,
ՍԻՐԵԼԻ՝ ՄԱՐՏԻՆ...
(յիշատակի խօսք)**

Կեանքից անակնկալ հեռացաւ նա: Թուում էր՝ Համալսարանի Պրօֆեսոր, բանասիրական գիտութիւնների դոկտոր Մարտին Գիլաւեանը կեանքն ապրում էր լիաբուն ու լիասիրտ: Ուր մտնում էր, լսարան թէ ամբիոն, դեկանատ թէ Ակադեմիայի գրականութեան ինստիտուտ, վարակում էր զրոյցի անկաշկանդ ուղղութեամբ, անսպառ ժպիտով, մի գաւաթ սուրճի շուրջ՝ սրամիտ եւ դիպուկ նետուած խօսքով: Միրուած էր համալսարանում: Բոլորը գիտէին, որ առերեւոյթ թէթեւ ու կենսալիւնդ էր դիմաւորում կեանքի կեռմանները: Ունէր հրաշալի ընտանիք, զաւակներ, թոռներ...:

Խնամքով բոլորից թաքցնում էր իրեն ներսից կոտտացնող ցար՝ երիտասարդ, շնորհալի որդու անակնկալ կորստեան մորմոքը վերջին տարիներին, որ ներքնապէս ու շատերի համար անտես հիւժում էր իրեն: Թերեւս հարազատների եւ շրջապատի համար դառնագոյն նոր անակնկալը եղաւ Մարտին Գիլաւեանի սրտի կանգը: Ո՛վ կը սպասէր: Թուում է՝ առաջին անակնկալի սպին դաւադիր արթնացաւ, որքան էլ այն կոյր հաւատն ունենային մերձաւորներն ու բարեկամները, թէ տոկոսն է Մարտինի սիրտը: Ինչպէս չյիշենք տրեանական խօսքը՝ իմաստաւորելով, թէ թէթեւ չէր անցնում մեր ընկերոջ կեանքը, ներքին տառապանքն էր նրա նոր օրերի ուղեկիցը:

Համալսարանում բարձր էին գնահատում Մարտին Գիլաւեանի անցած մանկավարժական եւ գիտական ուղին. այստեղ էր Միւնխեն լեռնաշխարհից եկած պատանին կերտել իր նոր կենսագրութիւնը, ապրել իր յախտուն երիտասարդութիւնը՝ թողած կարմիր տանիքներով Գորիսը, գրել առաջին բանաստեղծութիւնը: Եւ երբ բաւական յապաղումով, 2002-ին հրատարակել էր այնքան սպասուած «Քեզ հետ եւ առանց քեզ» քերթողագիրքը, խոստովանել էր, թէ այն միայն սիրած աղջկան չէր ուղղուած, այլէւ ծննդավայրին, Լորագետին, Որոտանին, Ջանգեզուրի կապոյտ քարափներին, նրա մարդկանց: Պատահական չէր տասնամեակներ ի վեր սիմվոլիստական գեղարուեստական մտածողութեան եւ առհասարակ բանաստեղծութեան գիտական ընկալման

տիրական ներկայությունը Մարտին Գիլաւեանի զգացական ու իմացական բաւիղներում, որն էապէս խորացրել էր տեսական դատումների զինանոցը, դարձել գրականագիտական հայեացք եւ ուսումնասիրություն, ուսանողների անհրաժեշտ ձեռնարկ: Դրա վկայությունները մէկից աւելին են. յիշենք «Ռուսական սիմվոլիզմը եւ արեւելահայ պօեզիան» թեկնածուական (1982) եւ «Նորագոյն շրջանի հայ պօեզիայի զարգացման միտումներն ու օրինաչափությունները» (1994) դոկտորական ատենախօսությունները, «Պօեզիան եւ ժամանակի շարժումը» (2003), «Վահան Տէրեանից Պարոյր Սեւակ ու մինչեւ մեր օրերը» (2017), «Սիմվոլիզմը հայ պօեզիայում» (2018) գրքերը եւ այլ ուսումնասիրություններ, յօդուածներ:

Նշենք նաեւ, որ Մարտին Գիլաւեանը խորը գնահատութեան էր արժանացել գիտամեթոդական ասպարեզում. բաւական է նշել այն բացառիկ դերը, որ նա ձեռք էր բերել համալսարանում՝ դառնալով եւ մինչեւ մահը քսան տարի անընդմէջ մնալով «Հայագիտական հանդէս»ի հիմնադիր-խմբագիրը, որի գիտականութեան մակարդակը քանիցս ընդունել եւ ճանաչել է խստավարժ ԲՈԿ-ը: Հարկ է նշել, որ միայն դրանով, ի թիւս մեր հաստատութեան այլ ծանրակշիռ, անուն հանած գիտական պարբերականների, «Հայագիտական հանդէս»ը անշեղօրէն բարձրացրել է արժեանքների գիտական վարկանիշը:

Մարտին Գիլաւեանը միշտ երիտասարդութեան հետ էր: Մխալուած չենք լինի՝ նշելով թերեւս ամենակարեւորը. հենց համալսարանում ձեռք էր բերել հմուտ դասախօս-մանկավարժի համբաւ անցեալ դարի 70-ական թթ. մինչեւ մեր այս օրերը: Նշենք կրթական ոլորտին բերած յիշարժան ծառայությունները. 1995-2011 թթ. նա բանասիրական ֆակուլտետի ղեկանն էր, մինչեւ այսօր Վաչէ Պարտիզունու անուան հայ նոր եւ նորագոյն գրականութեան եւ նրա դասաւանդման մեթոդիկայի ամբիոնի փորձառու Պրօֆեսոր, շուրջ կէս դար բանասիրական բաժանմունքում կարդացել է գիտամեթոդական տարաբնոյթ դասընթացներ՝ ռուս գրականութեան եւ հայ նորագոյն եւ նորանկախ շրջանների գրականությունների գծով, ղեկավարել հարիւրաւոր աւարտական աշխատանքներ եւ մագիստրոսական թեզեր: Աւելորդ չէ նշել, որ նրա հմուտ մականի տակ տասնեակ ասպիրանտներ եւ հայցորդներ պաշտպանել են թեկնածուական ատենախօսություններ. յիրաւի, նա խորը յետագիծ է թողել նորահաս սերնդի գիտական հմտությունների ձեւաւորման ճանապարհին:

Մարտին Գիլաւեանը յարգուած էր ուսանողական տարբեր սերունդների շրջանում եւ գիտական հանրութեան մէջ, մնում էր սիրուած աւագ գործընկեր ամբիոնում եւ համալսարանական միջավայրում: Նրան խորապէս գնահատում էին նաեւ համալսարանից դուրս. ՀՀ ԳԱԱ Մ.

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐԵՍ

Աբեղեանի անուան գրականության ինստիտուտի գիտական խորհրդի եւ աստիճաններ շնորհող խորհրդի անդամ էր:

Բազմամեայ գիտամանկավարժական արդիւնաւոր գործունէութեան համար Մարտին Գիլաւեանը պարգեւատրուել էր ՀՀ վարչապետի, Հայաստանի գրողների միութեան պատուոգրերով, ԿԳՄՍ նախարարութեան, մեր հարիւրամեայ համալսարանի բարձրագոյն պարգեւներով, «Ֆրիտեոֆ Նանսէն» մեդալով:

ՊԵՏՐՈՍ ԴԵՄԻՐՃՅԱՆ

ՀԳՄ վարչության քարտուղար
Բան. գիտ. դոկտոր

ՆՐԱ ՎԱՍՏԱԿՆ ՈՒ ԳՈՐԾԸ ԿՇԱՐՈՒՆԱԿԵՆ ԱՊՐԵԼ...

Վերջին շրջանում մի քանի անակնկալ, ցավալի կորուստներ ունեցանք: Նրանցից մեկն է ճանաչված գրականագետ, սիրված մանկավարժ Մարտին Գիլավյանը:

Պրպտող միտք ուներ, նախաձեռնող, արարող խառնվածք: Մանկավարժական համալսարանի նրա հիմնած «Հայագիտական հանդեսը», որի գլխավոր խմբագիրն էր 2005 թվականից, աչքի է ընկնում հրապարակումների գիտական բարձր մակարդակով:

Լայն հետաքրքրությունների տեր անձնավորություն էր: Նրա գրականագիտական հետազոտությունների ոլորտը նորագույն շրջանի հայ պոեզիան էր՝ սկսած 50-60-ական թվականներից, զարգացման միտումներից և օրինաչափություններից, մինչև միջազգային գրական կապերն ու առնչությունները: Չափազանց կարևորում էր հայոց պատմությունը չմոռանալու և այնտեղից դասեր քաղելու անհրաժեշտությունը: Նաև ազգի հոգևոր ներուժը: Սիրում էր մեջբերել Համո Սահյանի տողերը՝ «Ժողովուրդների ուժը, հզորությունը չափվում է ոչ թե ունեցած զենքի, զորքի քանակով, այլ՝ հոգևոր մաքառումների խորությամբ ու լայնությամբ»: Հայոց ոսկեդենիկ լեզվի պաշտամունք ուներ. համոզված էր, որ «Լեզուն ազգի ինքնության պահպանման առաջին գրավականն է» և «Մենք պարտավոր ենք պահպանել մայրենին, ապրել մայրենիով»:

Ուզում էմ հատկապես նշել նաև Մարտին Գիլավյանի աներեր հավատը արդի մեր երիտասարդության նկատմամբ, որին կրթելու և դաստիարակելու կարևորագույն գործին է նվիրել իր կյանքի լավագույն տասնամյակները՝ հայկական պետական մանկավարժական համալսարանում: Հպարտանում էր, որ ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետի ուսանողներ են եղել նաև Մերո Խանգաղյանը, Հրանտ Մաթևոսյանը, Ռազմիկ Դավոյանը...

Վստահ եմ, որ Մարտին Գիլավյան գիտնականի, մանկավարժի վաստակն ու գործը սերունդների մեջ անպայման կտան իրենց ցանկալի արդյունքը, որը և նպաստելու է բոլորիս հիշողության մեջ նրա կերպարի կենդանի և անխաթար մնալուն:

ՄԵԼԻՆԵ ԳԻԼԱՎՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ
Բան. գիտ. թեկն., դոցենտ

ԻՆՁ ԲԱՅԱԿԱ ՉԴՆԵՔ...

Ինչքան շատ բան կտայի, որպեսզի օրս քո «Բարի լույսով» սկսվեր: 10.04.2023թ. բարի լույսով չբացվեց: Այդ օրը դադարեց բաբախել հորս անսահման մեծ, վշտով ու կսկիծով լի սիրտը:

Անհնար է հաշտվել վշտի հետ և պատկերացնել Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի բանասիրական ֆակուլտետը առանց նրա նվիրյալ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսորի՝ Մարտին Գիլավյանի:

Մեծ է նրա՝ բանասեր-գիտնականի և փորձառու մանկավարժի ներդրումը հայ գրականագիտության և ՀՊՄՀ-ի գիտակրթական ներուժի զարգացման գործում: Նա հմտացած էր արդի գրականագիտության երկու ճյուղերում՝ ռուսագիտության և հայագիտության: Երկար տարիներ զբաղվելով հայ-ռուսական գրական կապերով՝ մասնավորապես ռուսական սիմվոլիզմի՝ հայ պոեզիայի վրա ունեցած հզոր ներգործության խնդիրներով, հենց այդ թեմայով էլ դարձել էր բանասիրական գիտությունների թեկնածու:

Հիմնական գիտահետազոտական բնագավառ էր ընտրել հայ ժամանակակից պոեզիան: Դոկտորական ատենախոսությունը լույս տեսավ նախ որպես մենագրություն «Ժամանակը և պոեզիան» (1990) խորագրով՝ նվիրված 20-րդ դարի 50-60-ականների հայ պոեզիային: Մարտին Գիլավյանին լայն ճանաչում են բերել տարբեր տարիներին գրած և հրատարակած «Պոեզիան և ժամանակի շարժումը» (2003), «Վահան Տերյանից Պարույր Սևակ ու մինչև մերձ օրերը» (2017), «Միմվոլիզմը հայ պոեզիայում» (2018) մենագրությունները, ինչպես նաև 100-ից ավելի գիտական և մեթոդական հոդվածները:

Նա բացառիկ էր իր տեսակի մեջ, և ով շփվել է նրա հետ, ծանոթ է նրա անսպառ հումորին, պերճախոսությանը, սրամտությանը: Արդյոք բոլորը գիտե՞ն, որ նա բանաստեղծ էր: Իրբն բանաստեղծ՝ նա ուներ ինքնաքննադատական խստություն: Բանաստեղծությունների ժողովածուն էր վերնագրված էր «Քեզ հետ ու առանց քեզ»: Ժողովածուն պետք է տպագրվեր 1960-ական թթ. վերջերին՝ Պ. Սևակի և Հ. Սահյանի հանձնարարականներով: Եվ երբ գիրքն արդեն շարված էր և ուղարկված տպարան, նա հետ վերցրեց: Մտածում էր, որ պետք է գրել Պ.Սևակից ու

Հ.Սահյանից լավ կամ ընդհանրապես չպետք է գրել: Դրանից հետո այլևս բանաստեղծություններ չգրեց: Եվ ավելի քան 30 տարի անց նա ներկայացրեց իր բանաստեղծությունները. դրանք սիրո, մայրության, հայրենի եզերքի, մեր մեծերի մասին իր պատկերացումների արահայտությունն են:

Որդու անժամանակ կորստից հետո նորից սկսեց բանաստեղծություններ գրել և ստեղծագործելով փորձում էր կոծկել իր ցավը: Ժողովածուն նույնպես պետք է վերնագրեր «Քեզ հետ ու առանց քեզ – 2», որտեղ ցանկանում էր ներկայացնել իր անցած ճանապարհը, և այդ ճանապարհի հանգրվաններում թանկ ու անվերադարձ կորուստների մասին:

Մարտին Գիլավյանը գրել է Մանկավարժական համալսարանի օրհներգը: 1995-2011թթ. նա բանասիրական ֆակուլտետի դեկանն էր, Վաչե Պարտիզունու անվան հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պրոֆեսոր:

Պրոֆեսոր Գիլավյանը ուսանողների պաշտելին էր և շարունակ էր սեր էր սերմանում դեպի գրականությունը: Եվ ինչպես ինքն էր ասում՝ *Գրականության ինդիքը բարության և սիրո սերմեր ցանելն է:*

Նրա վարքագծում առկա էր Սյունյաց աշխարհի ազատասիրական ոգին, մեր ժողովրդի համար ծանր ու օրհասական օրերին նա գրեց «Ելի՛ր, Սյունիք» բանաստեղծությունը, որն էլ դարձավ Սյունյաց աշխարհի օրհներգը:

Ելի՛ր Սյունիք, ժամն է արդեն
Քո որդիքը մի-մի բերդ են,
Առյուծներ են ահարկու:
Քաջ Նժդեհի ոգին քո մեջ
Թող հուրհրա այս ժամին,
Կրակ դառնա թող նա անշեջ,
Ու թող զգա թշնամին,
Որ ձորերդ անդնդախոր
Գերեզմաններ կդառնան
Նրանց համար, ովքեր այսօր
Թուրք ասկյար են ու վարձկան:
Զարկի՛ր զարկը դու քո վերջին
Հավատարիմ նախնյանց կանչին,
Ցույց տուր ոգին քո անկոտրում,
Որ հզոր է ու անհատնում...
Ելի՛ր, Սյունիք, զարկդ զարկիր,
Ու լեռներում քո արծվաբույն

Թող միշտ հնչի կանչը նախնյանց,
«Հացն ու գինին, տեր կենդանին»:
Զարկիր, ու քո զարկից հուժկու
Թող ձորերդ արձագանքեն
Դավիթ Բեկի կոչն ահարկու,
«Հաց ու գինին, տեր կենդանին»:
Թող ձորերդ արձագանքեն
Մխիթարի ձայնն առնական.
«Առաջ, քաջեր, իմ արծիվներ»,
«Հացն ու գինին, տեր կենդանին»
Ձեզ ապավեն»:

Մարտին Գիլավյանի ղեկավարությամբ տասնյակ ասպիրանտներ ու հայցորդներ պաշտպանել են թեկնածուական աստենախոսություններ: Նա 20 տարի եղել է «Հայագիտական հանդես» ամսագրի հիմնադիր-խմբագիրը, որը բազմիցս ճանաչվել է ՀՀ ԲՈԿ-ի կողմից:

Մարտին Գիլավյանին հարգում ու գնահատում էին նաև համալսարանից դուրս. նա ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտական խորհրդի և աստիճաններ շնորհող խորհրդի անդամ էր, Հայաստանի Գրողների միության մեծ բարեկամը:

Իր բազմամյա գիտամանկավարժական գործունեության համար պարգևատրվել է ՀՀ վարչապետի, Հայաստանի Գրողների միության պատվոգրերով, ՀՀ ԿԳ նախարարության, ՀՊՄՀ -ի, «Ֆրիտյոֆ Նանսեն» մեդալներով:

Իմ պաշտելի հայր...

Թող լույս իջնի քո շիրիմին, թող քո առջև բացվեն երկնային դրախտի դռները: Ես համոզված եմ, չգիտեմ երբ, բայց մի օր կհանդիպենք ...

ԵՍ

Ինձ փնտրեցեք այնտեղ,
Որտեղ ոչ մեկը դեռ չի փնտրել...
Ինձ փնտրեցեք այնտեղ,
Որտեղ ձյունները մեռնում են արդեն,
Ու ձնծաղիկը
Ժխտում է ձմռան համառությունը:
Ինձ փնտրեցեք բոլոր աշունների մեջ,
Ու եթե մի պահ աշնան գույներում
Մի կտոր գարուն նշմարեք հանկարծ,
Հասկացեք, ես եմ, ծնվում եմ արդեն:
Շրջեցեք մի պահ իրենց բներում

Ձեր աչքերը լուռ,
Ու եթե հանկարծ ձեր հոգու խորքում
Տեսնեք հառաչանք, ծիծաղ կամ արցունք,
Հասկացեք, ես եմ, ապրում եմ՝
Ցավով և ուրախությամբ ձեր հոգիների:
Կանգնեցեք մի պահ ու նայեք վերև
Անհունի միջով անցնում է ինչ-որ
Անձանոթ մի մարդ
Շուրթերին՝ սերը ձեր ամենօրյա
Ու աչքերի մեջ՝ հավատը ձեր նոր:
Հասկացեք, ես եմ՝ ձեր որոնածը
բոլոր դարերում...
Ինձ փնտրեք այնտեղ, որտեղ դեռ չկամ,
Իսկ որտեղ որ կամ, գտել են արդեն
Ու իրենցն արել....

Մարտին Գիլավյան

ԱՐՄԻՆԵ ՍՈՒՐԱԴՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ
Բան. գիտ. թեկն., դոցենտ

ՀՈՒՇԻ ՊՍՏԱՌԻԿՆԵՐ

Ամեն մեկս աշխարհ ենք գալիս, կատարում մեր առաքելությունն այս կյանքում և բազում երագանքներ, նվիրական ծրագրեր անկատար թողած, կարոտով հեռանում: Ոչ ոք չգիտի, թե որտեղ է ավարտվելու իր վերջին կանգառը: Իսկ երբ մահը գալիս է ակնթարթային արագությամբ, ցավն ավելի է խորանում և չես ուզում հավատալ...

Որքա ն իմաստուն են մեծերը. «Մահը մեր հաշվի մեջ չէ, մենք ենք նրա հաշվի մեջ» (Ավ. Իսահակյան):

Հայ գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի սիրված դասախոս, պրոֆեսոր, անվանի գրականագետ Մարտին Գիլավյանի անժամանակ մահը անսահման վիշտ պատճառեց դասախոսներին, ուսանողներին, բոլոր նրան ճանաչողներին: Ստովի անցնում եմ մեր անցած տարիների վրայով: Տասնյակ տարիներ աշխատել ենք կողք կողքի, ասես դարձել ենք մի ընտանիքի անդամներ: Աշխատանքային միջավայրը մեր երկրորդ տունն է, հարազատ ու թանկ, մեր կենսագրության կարևոր օղակներից մեկը: Ծանր, անսպասելի էր պրոֆեսորի կորուստը: Դժվար է նրա մասին խոսել անցյալով, այնքան կենդանի էր նրա կերպարը՝ պայծառ, հումորով շաղախված, հայրական գուրգուրանքով: Նա մանկավարժական, գիտական հարուստ ու բեղմնավոր ճանապարհ անցավ՝ իր երկրային կյանքում թողնելով գրականագիտական բազում գրքեր, հոդվածներ, հրապարակախոսական զեկույցներ, «Քեզ հետ և առանց քեզ» բանաստեղծական ժողովածուն, երկար տարիներ բանասիրական ֆակուլտետի դեկանը եղավ, «Հայագիտական հանդեսի» հիմնադիր-խմբագիրը, դեկավարեց ավարտական աշխատանքներ, մագիստրոսական թեզեր, ատենախոսություններ, կրթեց ու դաստիարակեց բազմաթիվ սերունդների: Հայաստանի տարբեր մարզերի դպրոցներում, ուսումնական կրթօջախներում, կարելի է հանդիպել նրա սաներին՝ իբրև կայացած ուսուցիչներ, լրագրողներ, գիտնականներ: Ժապավենի նման իրար են հաջորդում անցած տարիները՝ իրադարձություններ, միջադեպեր, երկար ու անմոռանալի ճանապարհորդություն Սիսիանի Լոր գյուղը (Հ. Սահյանի ծննդյան 100-ամյակի տոնակատարություն) և մշտապես Գիլավյանի վառ կերպարը՝ կենսուրախ, լուսավոր:

Հաճախ ենք միասին քննություններ ընդունել, մանկավարժական պրակտիկա դեկավարել տարբեր դպրոցներում: Տասնյակ ծիծաղելի դեպքեր, ինքնատիպ պատմություններ դրոշմվել են հիշողությանս մեջ: Անչափ հոգատար էր, ուշադիր ուսանողների նկատմամբ, հայրաբար էր մոտենում նրանց, խորհուրդներ տալիս, հետաքրքրվում, ոգևորում: Պաշտում էր իր զավակներին, թոռներին: Սիրում էր պատմել փոքրիկ Մարտինի արկածներից:

Երևանի թիվ 76 «Արզենտինյան Հանրապետություն» հիմնական դպրոցում՝ մանկավարժական պրակտիկայի ժամանակ, նույն դպրոցում սովորող նրա թոռնուհին՝ Նարեն, դասամիջոցների ժամանակ գալիս էր ընկերուհիների ուղեկցությամբ ու հպարտության զգացումով գրկում պապիկին: Նման պահերին երջանկությունից փայլում էին պարոն Գիլավյանի աչքերը և նա ինքնամոռաց, մտերմիկ գրույցի էր բռնվում: Այդ տարիների շրջանավարտները անշուշտ կհիշեն իրենց պարապած դասավարտումների քննարկումները, որոնք առանձնանում էին ուսանելի, ինքնատիպ վերլուծություններով, հումորով, խորիմաստ կյանքի դասերով: Կյանքը շատ էր սիրում, բայց ճակատագիրը ծանր հարված հասցրեց, համոզված էմ, որ որդու մահը կտորեց նրան: Աշխատում էր թաքցնել, երբեք ոչ մեկի վզին չփաթաթել իր ցավը, ներսից այրվում էր, բայց կարողանում է արտաքուստ ուրախ երևալ. յուրօրինակ մարդ էր:

Չնայած իր հետ պատահած մեծ ողբերգությանը՝ նա միշտ մնաց իր նման, չչարացավ աշխարհի դեմ, մնաց միշտ նույն բարի, մարդամոտ ու կենսասիրտ Մարդը:

Միրելի Մարտին Գիլավյան, Ձեր մահով ամբիոնում մի գույն պակասեց, շատ կարևոր մի գույն:

Ամբիոնի բոլոր անդամները մշտապես հիշում ու կարոտում են Ձեզ:

ԼՈՒՄԻՆԵ ԳԱԼՍՑԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ
Բան. գիտ. թեկն., դոցենտ

Վերջին անգամ հարգարժան պրոֆեսորին հանդիպեցի ֆակուլտետում ապրիլի 10-ին. միջանկյալ հարցման էր չորրորդ կուրսում: Տրամադրությունը բարձր էր. ծոռնիկ էր ունեցել: Ի՛նչ իմանայինք, որ հաջորդ լուսաբացը մահաբեր էր լինելու մեր շատ սիրելի Մարտին Գիլավյանի համար: Պակասեց հերթական գույնը՝ դատարկ թողնելով կյանքի ներկապնակը:

Դժվար է անցյալով խոսել մի մարդու մասին, որին ճանաչում ես ավելի քան երեսուներեք տարի իբրև դասախոս, գործընկեր և պարզապես հրաշալի անձնավորություն:

Մարդկային բարձր նկարագրով օժտված վառ անհատականություն էր, շոայլասիրտ, մարդասեր, անսասման բարի, միևնույն ժամանակ հարազատ Սյունյաց լեռնաշխարհի նման հպարտ ու ինքնավայել:

Նրա անգուգական հումորն ու համով-հոտով պատմելու ձիրքն այն կամուրջն էին, որով նա դեպի իրեն էր ձգում շրջապատին: Պարոն Գիլավյանի հետ աշխատելը ն՝ պատիվ էր, ն՝ պատասխանատվություն, և... հեշտ:

Նրա ամբողջ գիտակցական կյանքը եղել է դասախոսական աշխատանքի և գիտական գործունեության համադրումը, որի ընթացքում էլ նա կարողացել է մեր գրականագիտության համար ստեղծել արժեքավոր ուսումնասիրություններ:

Հարգարժան պրոֆեսորը հսկայական գործ է կատարել նաև հրատարակչական ասպարեզում. ցկյանս դառնալով «Հայագիտական հանդես»-ի հիմնադիր-խմբագիրը:

Մեծահարգ դասախոսը վայերում էր ուսանողության բացառիկ սերն ու համակրանքը: Անսասման սիրով ու երախտագիտությամբ են հիշում նրան նաև տարբեր սերունդների ուսանողներ: Պարոն Գիլավյանը մեծապես գնահատված և սիրված էր գործընկերների և ընդհանրապես իրեն ճանաչողների կողմից:

Հոգու ներքին խռովքը, հույզերն ու մտորումները երբեմն արտահայտում էր պոետական իր գրվածքներում, որոնց մի մասը

տպագրվել է 2002-ին «Քեզ հետ և առանց քեզ» վերնագրով ժողովածուում: Մտքի, հոգու, երևակայության հզոր շաղախով են արտահայտված մեր մեծերի, հայրենի եզերքի, սիրո մասին նրա պատկերացումները: Սյունյաց աշխարհի հանճարեղ բնության ոգեշնչմամբ գրված նրա բանաստեղծական տողերն այսօր էլ խիստ արդիական են. *«Հիմա վիրավոր քարերիդ վրա |Թեքվել է արդեն մանուշակը հեզ|Ու թռչուններդ հեռու հարավից|Բերում են արդեն կարոտը քո հին...»:*

Ժողովածուում տեղ են գտնել նաև գրական մեծերի՝ Թումանյանի, Չարենցի, Բակունցի, Սահյանի մասին նրա պոետական խոհերն ու մտորումները, որոնք կարծես մենախոսություններ են «գրուցակիցների» հետ. *«Ես կանգնում եմ քո անխոս արձանի մոտ ամեն օր, | Ու հայացքդ ինձ նորից տանում է հին մի աշխարհ, |Ինձ կանչում են կարոտիդ մրմնունջները հեռավոր, |Եվ արտասվում է հոգիս տառապանքով քո անձայր:*

Իսկ սիրո մասին նրա արտահայտություններում տեսնում ենք և թախծալի շեշտեր, և երջանիկ սիրո պահեր. միաձուլված բնության երևույթներին. *«Երազներիս մեջ մի աղջիկ մնաց|ու մոռացումից հրաշքով փրկված|մի կտոր աշուն՝ աղջկա երկա՛ր մազերի վրա...»:* *Պատանեկան ու երիտասարդական անկեղծ ապրումների ամփոփագիր է այս ժողովածուն:*

Մարտին Գիլավյանն արտաքուստ հանգիստ էր, խաղաղ ու անվրդով: Սակայն այդ անվրդով շղարշի հետևում անձնական անամոք վիշտն էր կրում անմոռուհ ու անձայն: Թերևս այդ հոգեմաշ ցավն էլ տարավ նրան դեպի հավերժություն՝ միավորելու հորն ու որդուն երկնային կյանքում:

Հիշատակն արդարոց օրհնությամբ եղիցի...

ԱՆԱՀԻՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՑԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ
«Հայագիտական հանդես» ամսագրի խմբագրի տեղակալ
Բան. գիտ. թեկնածու

ԽՈՐ ԱՓՍՈՍԱՆՔԻ ԶԳԱՑՈՒՄՈՎ...

Պրոֆ. Մարտին Գիլավյանին ճանաչում եմ 25 տարի. նրան աշակերտել եմ որպես ուսանող, ապա աշխատել եմ ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետում, իսկ վերջին 9 տարիներին նրա հետ համագործակցել եմ «Հայագիտական հանդես» ամսագրի շրջանակներում:

Ընկ. Գիլավյանին հիշելիս առաջին բառը, որ գալիս է մտքիս, բարին է, հետո՝ բարեսիրտը, հետո՝ բարյացակամը ու բարի բառով կազմված հայերենի բոլոր բառերը: Ընկ. Գիլավյանին՝ որպես դասախոսի հիշելիս մտաբերում եմ նրա մանկավարժական բարձր որակները և իր մասնագիտությանը նվիրումը: Ընկ. Գիլավյանին՝ որպես բանասիրականի դեկան հիշելիս աչքիս առաջ հառնում է հմուտ դեկավարը, ուսումնական գործընթացի կազմակերպիչը: Ընկ. Գիլավյանին՝ որպես գիտնական-մտավորականի, գնահատում ու արժևորում ենք նրա գիտական ժառանգությամբ ու բեղմնավոր գրչով: Ափսոս, կանգնեց գրիչդ, սիրելի՛ պրոֆեսոր, ու շատ անավարտ մտքեր թողեցիք կիսատ: Ափսոս, որ այլևս չենք վայելելու Ձեր ներկայությունը բանասիրական ֆակուլտետում կամ չենք հանդիպելու Ձեզ համալսարանից ներս ու դուրս. չե՞ որ Դուք այնքա՛ն ձուլված էիք Մանկավարժականին:

Ես չեմ մոռանա, թե ինչ հպարտությամբ ու սիրով էիք նախապատրաստում Մանկավարժական համալսարանի 100-ամյակին նվիրված «Հայագիտական հանդես» ամսագիրը: Նույն ոգևորությամբ հասցրիք լույսընծայել նաև ամսագրի 20-ամյա հոբելյանին նվիրված համարը:

Պրոֆեսոր Գիլավյանի բացակայությունը չի խանգարում նրա ներկայությանը. նա միշտ ներկա է ու կա մտքում...

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՐԳՍՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ
Հայ հին և միջնադարյան գրականության
և նրա դասավանդման մեթոդիկայի
ամբիոնի ասպիրանտ

ՀԱՃԵԼԻ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Յուրաքանչյուր մարդ կյանքի տարբեր շրջաններում հանդիպում է որևէ անհատի, որն իր կատարած քայլերով կարող է շրջադարձային, ճակատագրական փոփոխություններ մտցնել անձի հետագա կայացման, զարգացման գործընթացում: Պրոֆեսոր Մարտին Գիլավյանի բերած նպաստը իմ՝ բանասիրական ֆակուլտետում կրթությունս շարունակելու, կյանքս գիտության հրաշագործ աշխարհի հետ հետագայում կապելու առումով անգնահատելի է...

2008 թվականի սեպտեմբերի 1-ն էր: Առաջին անգամ ոտք էի դնում Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետի՝ Ալեք Մանուկյան փողոցում տեղակայված մասնաշենք: Հայոց լեզու և գրականություն մասնագիտությամբ 1-ին կուրս ընդունված 106 ուսանողներին 3-րդ հարկում՝ Հրանտ Մաթևոսյանի անվան լսարանում, դիմավորում էր լեզվաբանության և գրականագիտության, մանկավարժության բնագավառի պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի ներկայացուցիչների աստղաբույլը: Չանգը հնչեց, լսարանում հավաքվածների խոսակցություններն ու շշուկները լռեցին, և ամբիոնին համընթաց շարժումով մոտեցավ, բարիգալստյան իր հանդարտ, սակայն տպավորիչ խոսքն ասաց ժպտադեմ, հետաքրքիր խոսույթ ունեցող դեկանը՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մարտին Գիլավյանը: Այդ, նաև մյուս դասախոսների ելույթներից արդեն պարզ էր. ընդունվել եմ մի ֆակուլտետ, որտեղ բացի որակյալ կրթությունից, շրջապատված եմ լինելու նաև ծնողական գործվանքով իրենց ուսանողներին վերաբերվող անձնակազմով: Մեկ տարի հետո արդեն պարոն Գիլավյանից ստացած զգացմունքային, միաժամանակ ուղղորդող, ուսուցողական, ամենակարևորը՝ տղամարդկային խորհուրդներով

ու հորդորներով գնալու էի բանակ՝ հայրենիքի հանդեպ պարտքս կատարելու: Երբ վերադարձա ծառայությունից, Մարտին Գիլավյանը չէր ղեկավարում ֆակուլտետը, սակայն շարունակում էր մանկավարժական գործունեությունը՝ դասախոսելով հարազատ կրթօջախի տարբեր կուրսերում: Ավարտական լսարանում ծանոթացա Մարտին Գիլավյան մանկավարժի յուրօրինակ կերպարին՝ արևելահայ պոեզիայի, ինչպես նաև հայ նորագույն գրականության լավագույն հեղինակների հետ առնչվելու ճանապարհին: Հ. Թումանյանի, Ա. Իսահակյանի, Վ. Տերյանի, Ե. Չարենցի և մեր մյուս հզորների մասին խորքային գիտելիքներ, Հ. Շիրազի, Պ. Սևակի, Հ. Սահյանի, Ս. Խանգաղյանի, Հ. Մաթևոսյանի Ս. Կապուտիկյանի, Ռ. Դավոյանի, մեր նորօրյա այլ բանաստեղծների կյանքից, գործունեությունից այնպիսի պատմություններ, որոնք շատ քչերին է հայտնի, ստանում և լսում էինք նրանից: Թվարկված գրողներից ու բանաստեղծներից շատերի ժամանակակիցն է Մարտին Գիլավյանը, նրանց հետ ճանապարհ անցած, հաց կիսած... Ի՛նչ հետաքրքրությամբ էինք լսում այդ պատմությունները՝ համեմված գորիսեցուն բնորոշ մեղմ հումորով, անեկդոտախառն խոսքով:

Պրոֆեսոր Գիլավյանը խթանում էր ուսանողների ստեղծագործական մտածողության զարգացումը՝ ոգևորելով և ճիշտ ճանապարհի վրա դնելով գրական առաջին թոթովանքներն անող ուսանողներին: Երկար տարիներ նա բանասիրական ֆակուլտետի գրական ակումբի ղեկավարն էր: Օրերից մի օր վախվիսելով ցույց տվեցի պատմվածքներիցս մեկը, որը սիրով կարդաց, մի քանի շտկումներ կատարեց, խորհուրդներ տվեց, կարծիք գրեց, որոշեց, որ այն պետք է տպագրվի Մանկավարժական համալսարանի պաշտոնաթերթում... Հաջորդ համարում թերթի գլխավոր խմբագիր Միլվա Ասրյանը մեկ ամբողջ էջ էր հատկացրել պատմվածքիս՝ թեկնածուական ատենախոսության իր ղեկավարին՝ Մարտին Գիլավյանին չմերժելով... Դա առաջին նյութս էր, որ տպագրվեց պարբերական մամուլում: Դրանից հետո գրվածքներիս մասին ինքնաքննադատության վախը հաղթահարվեց. առաջին քայլն արված էր: Այսօր էլ յուրաքանչյուր նոր հոդվածի հետ, որ տպագրվում է պարբերական մամուլում, լինի դա «Մանկավարժ»-ը,

«Հայաստանի Հանրապետություն»-ը, «Ազգ»-ը կամ մարզային «Արագած աշխարհ»-ը, մտքումս շնորհակալություն եմ հայտնում պարոն Գիլավյանին՝ այդ ոլորտում ինձ առաջիններից մեկը աջակցելու համար:

Մագիստրատուրայում պրոֆեսոր Գիլավյանի օգնությամբ ուսումնասիրեցի հայ նոր և նորագույն գրականության զարգացման հիմնական ուղղություններն ու ժանրերը, խոր գիտելիքներ ստացա հայ գրականության մեջ սիմվոլիզմ գրական ուղղության մասին: Հարգարժան դասախոսի մակագրությամբ՝ որպես կուրսի ավագ նվեր ստացած «Միմվոլիզմը հայ գրականության մեջ» աշխատությունը այսօր էլ զարդարում է անձնական գրադարանս...

Մարտին Գիլավյանը, լինելով «Հայագիտական հանդես» գիտական ամսագրի երկարամյա գլխավոր խմբագիրը, հումանիտար ոլորտն ընտրած բազմաթիվ ուսանողների համար նաև գիտության ասպարեզ մտնելու ճանապարհ է բացել: Ես էլ նրանցից մեկն եմ. դեռ հենց «Հայագիտական հանդես»-ում են տպագրվել առաջին երկու գիտական հոդվածներս, որոնց առկայությունը օգնեց՝ շարունակել բանասիրական կրթությունս և սովորել Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ ասպիրանտուրայում...

Վերջին չորս տարիներին բախտ ունեցա նաև որպես գործընկեր առնչվել ու շփվել պրոֆեսորի հետ: Իր դրական տրամադրվածությունը, գիտակ աշխատակցի փորձառությունը, մանկավարժական նուրբ տակտը, մարդկային բարձր հատկանիշները, անսահման հումորը ապահովում էին նրա հետ անխոչընդոտ, հաճույքով աշխատելու գրավականը: Դասախոսություն ունենալու դեպքում զալիս էր համալսարան դասի մեկնարկից շատ առաջ, նստում էր դեկանատում, խոսում աշխարհի անցուդարձից, վերհիշում իր հարուստ կենսագրության հետաքրքիր դրվագները, հարցուփորձ անում գիտության ասպարեզում առաջին քայլերն անող երիտասարդներիս հաջողությունների մասին: Մշտապես մասնակցում էր ֆակուլտետում կազմակերպվող մշակութային և գիտական միջոցառումներին. անսահման ուրախ էր և չթաքցրեց ոգևորությունը հատկապես մանկագիր Երվանդ Պետրոսյանին նվիրված հուշ-ցերեկույթի ընթացքում: Ելույթ ունեցավ հորդորելով շարունակական դարձնել մանկավարժական

համալսարանն ավարտած հայտնիներին նվիրված միջոցառումների շարքը:

Մարտին Գիլավյանի հետ վերջին հանդիպումն ու շփումն էլ հիշվող է: Այնպես ստացվեց, որ բուհի արհմիության կողմից բոլոր աշխատակիցների համար նախատեսված նվերները տրամադրվեցին կանանց նվիրված միամսյակի ավարտի հետօրյակին: Պրոֆեսորը այդ օրը առույգ տրամադրության մեջ էր: 4-րդ կուրսի ամփոփիչ քննությունը հաջող, առանց անբավարար գնահատական նշանակելու ավարտելուց հետո մոտեցավ դեկանատ, ստացավ նվերը՝ չմոռանալով կատակել. «Ապրիլի 7-ի կապակցությամբ տղամարդկանց է՛լ են սկսել նվեր տալ»: Հետո «Հայագիտական հանդես»-ի հետ կապված մի քանի թուղթ կար՝ ստորագրեց, խնդրեց վարչական մասնաշենք գնալիս փոխանցել քարտուղարություն և դուրս եկավ...նվերը մոռանալով...

Պրոֆեսոր Գիլավյանի՝ բանասիրության, մանկավարժության ոլորտներում կատարած անգնահատելի դերի, ինչպես նաև նրա վառ կերպարի, «մարդ» տեսակի մասին են վկայում տարբեր գերատեսչությունների կողմից ստացած բազմաթիվ բարձր պարգևներն ու մրցանակներ և, ամենակարևորը, գործընկերների, ուսանողների ու պարզապես ճանաչողների՝ նրա հետ կապված հաճելի հիշողությունները...

ՆԵԼԼԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ
«Սփյուռք» գիտաուսումնական կենտրոնի
ավագ գրադարանավար

«ՔԵՁ ՀԵՏ ՈՒ ԱՌԱՆՑ ՔԵՁ»

Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանն ամենից ամառյուն՝ անմահ արժեք հռչակեց գործը, գործ, որը դարեդար ապրեցնում է անհատին կամ ժողովրդին: Ի՞նչ թողեց իրենից հետո գրականագետ, մանկավարժ, պրոֆեսոր Մարտին Գիլավյանը, ո՞րն է այն գործը, որը պիտի ապրեցնի մարդուն ոչ միայն իր մտերիմների հուշերում, այլև շարունակի նրա ճանապարհը երկար, շատ երկար...

Հիրավի, Մ. Գիլավյանը թողեց գրականագիտական հարուստ ժառանգություն՝ «Ժամանակը եւ պոեզիան», «Պոեզիան եւ ժամանակի շարժումը», «Վահան Տերյանից Պարույր Սեւակ ու մինչեւ օրերը», «Սիմվոլիզմը հայ պոեզիայում» նորագույն գրականությանը վերաբերող ուսումնասիրությունները, որոնք մեր առջեւ բացում են գրականության մշտահմա դռները, տանում ծանոթ ու անծանոթ բավիղներով: Հենց այս գրքերն են ամբարում գրականագետ Մարտին Գիլավյանի՝ տարիների տքնաջան աշխատանքը. պրոֆեսորը, անսալով բանաստեղծին, գործեց՝ ավելի ճիշտ՝ ՍՏԵՂՕՍԳՈՐԾԵՑ: Գրեց սերունդների համար, որպեսզի իր ֆիզիկական չգոյությամբ անգամ ոչ մի բռպե չընդհատվի ուսուցանելու սրբազան ծեսը:

Գրականագիտական հետազոտությունների կողքին կա մի փոքրիկ գրքույկ՝ «Քեզ հետ ու առանց քեզ» խորագրով: Այսպես է վերնագրել իր բանաստեղծական միակ հատորը Մ. Գիլավյանը. միակ, որովհետեւ շատ երկար լռեց, քանզի համոզված էր՝ «պետք է գրել Պ. Սեւակից եւ Հ. Մահյանին լավ կամ ընդհանրապես չպետք է գրել...»:

Գաղտնիք չէ, որ բանաստեղծությունը մարդու ապրումների հուզական խտացումն է. այն նաեւ լավագույն ճանապարհն է մարդու ներաշխարհը ճանաչելու, նորովի բացահայտելու: Հենց այս փոքրիկ, շատերի աչքից թաքնված գրքույկն է մեզ պատմում Մարտին

Գիլավյան մարդու մասին: Այն կարծես հեղինակային ես-ի ներքին շերտերը վերհանող գողտրիկ մի ճանապարհ լինի. այստեղ ինքն է՝ մեզ անձանթ գեղագետը՝ իր հոգու երգով, իր մարդկային նրբին ապրումներով:

Պատահական չէ, որ գիրքը սկսվում է ծննդավայրի պատկերներից՝ «մի փոքրիկ երկիր՝ անվամբ Զանգեզուր», որը սոսկ աշխարհագրական տարածք չէ իր համար, այլ սրբազան վայր, որը «հոգու եւ կարոտի ձայնով» շարունակ կանչում է իրեն, վերադարձնում մանկության քարափներին, մեկիկ-մեկիկ արթնացնում հայրենի տան ջերմ հուշերը, հարազատ մոր նման բացում տաքուկ գիրկը: Նա որդիական նվիրումով եւ հպարտությամբ է պատմում Սյունյաց աշխարհի դժվարին պայքարի ու հերոսական հաղթանակի պատմությունը: Հայրենի հողն այն ակունքն է, որից ինքը սնվում է, գորանում, ինչպես հունական հսկա-հերոսը.

Երկի ր իմ,

Կանգնել եմ ահա

Քո հազարամյա լեռների վրա

Ու գորանում եմ Անթեյի նման...:

Հետո գալիս է պատանեկան սիրո շրջանը՝ սիրելիի հետ եւ առանց նրա անցկացրած ժամերի նրբին եւ գաղտնի պատմությունը: Միրո, տառապանքի, միայնության գերիշխող տրամադրությունները, սիմվոլիզմին հատուկ կյանքի եւ մահվան խորհուրդների խաղարկումը ոչ մի կերպ չեն «ծանրացնում» Մ. Գիլավյանի պոեզիան. բանաստեղծությունները գերզգացմունքային են, քնարական շնչով հագեցած, չկան մարդկային աղարտված զգացմունքներ. ամենուրեք նա է՝ անհասանելի, մաքրամաքուր երազ աղջիկը, որին տառապալից սպասումով ձգտում է քնարական հերոսը.

Թույլ տուր, ախ, թույլ տուր գոնե երագում

Հոգնած գլուխս դնեմ ծնկներիդ,

Հոգնած մատներս այրեմ ափիդ մեջ

Ու գեթ մի վայրկյան մոռանամ ես ինձ...

Թույլ տուր աչքերիդ անգուսպ ծիծաղով

Դուրս մղեմ ինձնից իմ տխրությունը

Ու աչքերիդ մեջ ինձ գտնեմ նորից...

Չափազանց հետաքրքիր են մեր գրականության հսկաներին նվիրված բանաստեղծությունները, որոնք հարզանքի, խոնարհումի տուրք են «ուսուցիչներին»՝ Վ. Տերյանին, Ե. Չարենցին, Ա. Բակունցին, Հ. Մահյանին: Ինքնատիպ է Ա. Բակունցին նվիրված «Կարոտ» բանաստեղծությունը, որտեղ մի քանի տողի մեջ խտացված է «Միրհավ» պատմվածքի ողջ փիլիսոփայությունը.

Լինե՛ր,

Այնպես լինե՛ր,

Մոնան կանգներ հոգնած ու հեզ,

Ու մատներս տառապելին

Թուխ մազերի ծալերի մեջ...

«Քեզ հետ ու առանց քեզ»ը թերթելիս, այնուհանդերձ, մի հարց է ծագում. ինչո՞ւ 1960-ականներին գրքի տպագրությունը կասեցնելուց տասնյակ տարիներ անց Մ. Գիլավյանը որոշեց, որ այն պիտի տպագրվի. միգուցե հոգին լիովի բացելու եւ շրջապատի հետ այն բաշխելու պահը հասունացավ, միգուցե զգաց, որ սփոփանքի խոսքերը հենց ինքը պիտի ասի, երբ մնանք հիշողության ու կորստի՝ ցավի հետ դեմ հանդիման: «Քմժիծադելով մահվան երեսին»՝ մեզ՝ մնացողներին, պիտի պատմի կյանքի անցողիկության եւ հոգու անմահության պատմությունը.

...Ինձ փնտրեցեք բոլոր աշունների մեջ

Ու եթե մի պահ աշնան գույներում

Մի կտոր գարուն նշմարեք հանկարծ

Հասկացեք, ես եմ, ծնվում եմ արդեն...

Շրջեցեք մի պահ իրենց բներում

Ձեր աչքերը լուռ

Ու եթե հանկարծ ձեր հոգու խորքում

Տեսնեք հառաչանք, ծիծաղ

Կամ արցունք

Հասկացեք, ես եմ, ապրում եմ՝

Ցավով եւ ուրախությամբ ձեր հոգիների

Կանգնեցե՛ք մի պահ

Ու նայեք վերել.

Անհունի միջով անցնում է ինչ-որ

Անծանոթ մի մարդ՝

Շուրթերին՝ սերը ձեր ամենօրյա

Ու աչքերի մեջ՝ հավատը ձեր նոր:

ՀՈՂՎԱԾՆԵՐ՝

ՆՎԻՐՎԱԾ ՊՐՈՖԵՍՈՐ ՄԱՐՏԻՆ ԳԻԼԱՎՅԱՆԻ ՀԻՇՍԱԿԻՆ

ИННА САРКИСЯН

Доктор педагогических наук, профессор
Государственный университет
им. В.Я. Брюсова
Российско-Армянский университет
innasargsyan@gmail.com

КРИСТИНА МУРАДЯН

Армянский государственный институт
физической культуры и спорта

**АНТРОПОЦЕНТРИЧЕСКИЙ ПОДХОД К ЛЕКСИКОГРАФИИ КАК ВЕЯНИЕ
ВРЕМЕНИ**

(Светлой памяти профессора М.Гилавяна посвящается)

Предисловие

Качественное, результативное и эффективное обучение предполагает наличие в учебном арсенале учащихся специально разработанных словарей и справочников – профессионально ориентированных лексикографических произведений. В связи с этим представляется необходимым включать в современный словарь основные коннотативные значения лексических единиц, ассоциативные и стилистические особенности вокабул и важнейшие социокультурные характеристики слова. Наиболее перспективным направлением в современной учебной лексикографии является теоретическая разработка основ антропоцентрической лексикографии и антропоцентрического словаря.

Ключевые слова и выражения: лексикография, антропоцентрический подход, гендерно-ориентированная информация, языковая личность, пользователь словаря, развитие личности, словарный запас.

Качественное, результативное и эффективное обучение предполагает наличие в учебном арсенале учащихся специально разработанных словарей и справочников – профессионально-ориентированных лексикографических произведений. В данном ракурсе описание культурных символов и

концептов, существенных для межкультурного диалога, в том числе и в сопоставительном аспекте, приобретает первостепенную значимость. В связи с этим представляется необходимым включать в современный словарь основные коннотативные значения лексических единиц, ассоциативные и стилистические особенности вокабул и важнейшие социокультурные характеристики слова. В словарной статье культурно-коннотируемой единицы должны присутствовать стилистические пометы, маркеры сочетаемости и, в некоторых случаях, этимологическая справка. Такое расширение информации может внести существенный вклад в решение проблемы подбора межъязыковых эквивалентов со своеобразной лексико-грамматической сочетаемостью и социолингвистическими коннотациями, обусловленными различиями в социокультурной среде разных языковых представителей.

Наиболее перспективным направлением в современной учебной лексикографии является теоретическая разработка основ антропоцентрической лексикографии и антропоцентрического словаря.

Любая наука развивается по пути внутренней дифференциации и интеграции с другими науками, причем указанные процессы могут происходить одновременно. В последнее время антропоцентрический подход становится общим научным принципом решения наиболее актуальных проблем в различных областях исследовательской деятельности. Антропоцентризм определяет новый этап развития современной науки и методики в целом.

С позиций антропоцентризма в лингвистике, методике и в лексикографии основное внимание уделяется не собственно языковой системе, а языковой личности, человеку, который становится центром языковой действительности. Антропоцентризм современного языкознания открывает возможность приблизиться к такому описанию языка, которое восстанавливает единство языка с его носителем.

Введение в лексикографию категории “языковая личность” позволяет решить проблему приближения словарных материалов к нуждам и потребностям личности. В лексикографии под языковой личностью понимается пользователь словаря. Структура языковой личности включает в себя три уровня: вербально-грамматический, когнитивный и прагматический. Каждый из уровней характеризуется определенным набором “единиц и отношений, которые коррелируют с единицами и отношениями, традиционно используемыми при изучении языка как системы” [1].

Антропоцентрический подход заставляет лексикографов соотносить свою научную деятельность не только с ответами на вопросы, для чего создаются словари и как их создают, но и с новой проблемой – как воспринимаются материалы словаря пользователем. Встает вопрос о создании словарей, способных отражать механизм владения языком. Так, по мнению Ю.Н. Караулова, антропоцентрические словари должны быть ориентированы на показ усредненного словарного запаса и правил его использования средним носителем языка как отдельной языковой личностью. Таким образом, в лексикографии наряду с традиционным созданием системно ориентированных словарей формируется новая задача создания антропо-ориентированных словарей. Системно-ориентированные словари отражают лексико-семантическую систему языка, а в идеале – всю языковую структуру. А антропоцентрические словари, по мнению Ю.Н. Караулова, должны быть ориентированы на показ усредненного словарного запаса и правил его использования средним носителем языка как отдельной языковой личностью. Первые имеют справочно-просветительское предназначение, а “вторые – установку на обучение, на активное владение языком и поддержание знаний и нем, его эффективное использование” [2].

Встает проблема определения места антропоцентрического словаря в системе словарей. Представляется, что антропоцентрический словарь должен занять промежуточное место между учебным и общим словарем, поскольку между ними есть существенные различия, заключающиеся в том, что в учебном словаре отражен принцип компрессии и минимизации языка. Учебная лексикография формирует языковую личность, а антропоцентрическая лексикография должна словарными средствами обеспечить развитие языковой личности.

Учебные словарные статьи могут быть представлены профессионально-ориентированных учебниках и учебных пособиях в виде предтекстовых или послетекстовых словарных статей, обеспечивающих адекватное понимание проходимого научного (адаптированного или неадаптированного) научного текста. Что касается антропоцентрического словаря, то его удобнее всего представить пользователю в электронном виде на цифровом носителе.

Данные, полученные в результате лингвистических гендерных исследований [1, 3, 4, 5, 6], позволяют не только расширить рамки, в которых рассматриваются и описываются языковые единицы, их функционирование и взаимодействие в различных сферах человеческого бытия, но и поместить человека в особый социальный контекст, в котором его личность репрезентируется в собственной когнитивной области и ориентируется в ней

в соответствии с культурно-обусловленными, экзистенциальными и общественно значимыми характеристиками. Принципы гендерного подхода к изучению языка вполне соответствуют положениям, изложенным в новых теориях лексикографического описания языковых единиц, лексикографическому портретированию языковых единиц [7]. Эти концепции подразумевают наиболее полное и адекватное описание языковых единиц и включение в словарные статьи экстралингвистической информации, способствующей правильному пониманию и употреблению данных единиц в речи.

Таким образом, возникают предпосылки для становления и развития новых областей научного знания, в рамках которых систематизируется и наращивается материал для лексикографии – новые подходы, концепции, методы и принципы фиксации и кодирования составляющих знания о взаимосвязи и взаимовлиянии языка и социокультурных факторов. В частности, это лингвистическая гендерология, получившая статус самостоятельного лингвистического направления, и гендерный подход к изучению языка, конструируемый в лингвофилософском, лингвокультурном и лингвопрагматическом аспектах.

Данные концепции лексикографического описания языковых единиц соответствуют сущности интегрального описания языка, т.е. согласованному описанию грамматики и лексики, а также позволяют учитывать “человеческий” или антропный фактор в описании языковых единиц, рассматривая человека не только как субъекта, но и как объекта по отношению к языку. Это обосновывает необходимость и важность описания гендерно-обусловленной информации (ГОИ) в словарях, что расширяет теоретический и эмпирический потенциал лексикографии и вносит вклад в расширение проблемы “человек в словаре”.

Активный интегральный системный словарь или словарь лексикографических портретов отвечает современным требованиям и в идеале содержит полную информацию о языковой единице, нужную не только для ее адекватного понимания в любом контексте, но и для ее правильного употребления в речи. Такой словарь содержит меньшее количество лексикографических единиц по сравнению с традиционным словарем, но отличается объемом представленной информации и детальностью ее разработки. Лексикографический портрет языковой единицы иллюстрирует новый взгляд на содержание словарной статьи.

Литература

1. Кирилина А.В. Гендерные исследования в зарубежной и российской лингвистике (Философский и методологический аспекты) // Общественные науки и современность. 2000. N 4. - С. 138-143.
2. Караулов Ю.Н. Лингвистическое конструирование и тезаурус литературного языка. М.: Наука, 1981. - 366 с.
3. Кирилина А.В. Развитие гендерных исследований в лингвистике // Филологические науки, 1998. N 2. - С. 7, 51-58.
4. Ольшанский И.Г. Гендерные исследования как одно из направлений социолингвистики // Проблемы социолингвистики и многоязычия. 1997. N 1 - С. 22-34.
5. Женщины, познание и реальность: Исследование по феминистской философии. М.: Российская политическая энциклопедия, 2005. - 440 с.
6. Васькова О.А. Гендер как предмет лексикографического описания: Дис. ... канд. филол. наук. М., 2006. - 117 с.
7. Апресян Ю.Д. Избранные труды. Т.2: Интегральное описание языка и системная лексикография. М.: Школа. "Языки русской культуры". Восточная литература. РАН, 1995. - 766 с.

**Իննա Սարգսյան , Քրիստինա Մուրադյան
Մարդակենտրոն մոտեցում բառարանագիտությանը՝
որպես ժամանակի միտում
(Նվիրվում է պրոֆեսոր Մ. Գիլավյանի հիշատակին)
Ամփոփում**

Բանալի բառեր և արտահայտություններ. բառապաշար, մարդակենտրոն մոտեցում, գենդերային կողմնորոշված տեղեկատվություն, լեզվական անհատականություն, բառարանից օգտվող, անձի զարգացում, բառապաշար:

Որակյալ և արդյունավետ ուսուցումը ենթադրում է ուսանողների ուսումնական զինանոցում հատուկ մշակված մասնագիտական ուղղվածությամբ բառապաշարով բառարանների և տեղեկատուների առկայություն: Այս առումով անհրաժեշտ է ժամանակակից բառարանի մեջ ներառել բառապաշարի հիմնական իմաստային արժեքները, վոկաբուլյարների ասոցիատիվ և ռճային առանձնահատկությունները և խոսքի կարևորագույն սոցիալ-մշակութային բնութագրերը: Ժամանակակից

կրթական բառարանագիտության առավել հեռանկարային ուղղությունը մարդակենտրոն բառարանի և մարդակենտրոն բառապաշարի հիմունքների տեսական զարգացումն է:

Inna Sargsyan , Kristina Muradyan

Anthropocentric approach to lexicography as a time trend
(Dedicated to the blessed memory of Professor M. Gilavyan)

Conclusion

Key words and expressions: lexicography, anthropocentric approach, gender-oriented information, language personality, dictionary user, personality development, vocabulary.

High-quality and effective training involves the presence in the educational arsenal of students of specially developed dictionaries and reference books-professionally oriented lexicographic works. In this regard it seems necessary to include in the modern dictionary the main connotative meanings of lexical units, associative and stylistic features of vocables and the most important socio-cultural characteristics of the word. The most promising direction in modern educational lexicography is the theoretical development of the basics of anthropocentric lexicography and anthropocentric vocabulary.

АНАИТ АМИРХАНЫ

АГПУ имени Хачатура Абовяна

Кандидат филологических наук, доцент

amirknan@yahoo.com

ОБ АРМЕНОВЕДЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЯХ КАК СВОЕОБРАЗНОМ
КОДЕ ИНТЕГРАЦИИ ЛИТЕРАТУРОВЕДЕНИЯ
(*Светлой памяти профессора М.Гиляяна посвящается*)

Предисловие

В статье представлен обзор некоторых публикаций доктора филологических наук, профессора АГПУ им. Х.Абовяна М.Г. Гиляяна, их роли и месте в армянском литературоведении.

Ключевые слова и выражения: М.Гиляян, литературоведение, книга, учебное пособие, статья.

Осознанию великой роли литературы в жизни способствует поиск новых путей понимания творчества писателя и методов исследования художественного слова. М.Горький, говоря о пьесах А.Чехова, отмечает, например, реализм, возвышающийся «до одухотворенного и глубоко продуманного символа» [З. Т. 28. С. 52]. Именно этот «символ» становится основой исследований доктора филологических наук, профессора АГПУ имени Х.Абовяна М.Г. Гиляяна, известного многочисленными публикациями в научной среде Армении.

В книге 2003 г. «Պոեզիան ու ժամանակի շարժումը. Հոդվածներ, գրական դիմանկարներ» («Поэзия и движение времени. Статьи, поэтические портреты». Ереван: Наири, 2003. 168 с.) автор признает, что поэзия отражает не только свое время, но и передает сформированный веками национальный портрет и его духовный облик со всеми противоречиями, надеждами и чаяниями. По справедливому замечанию исследователя, не стала исключением и современная армянская поэзия, которая является наследницей творческих поисков и завоеваний предыдущих поколений поэтов.

Так, в 1960-е годы П.Севак оказался одним из тех, кто затронул в своем творчестве проблему реализма, выступив в 1966 г. с программной статьей «За и против основ реализма» («Հանուն և ընդդեմ ռեալիզմի նախահիմքերի»), которая, как отмечает М.Гиляян, «в корне изменила наши представления о литературе и, в частности, о поэзии» (1. С. 3).

Севаку удалось вывести лирику на новый уровень, изменить назначение поэзии, ее форму и содержание, и целая плеяда поэтов-современников – А.Сагиян, В.Давтян, Г. Эмин, М.Маркарян, Гр.Ованисян, С.Капутикян и др. – свой творческий процесс связывает с необходимостью обновления поэзии. М.Гиляван в своем исследовании, включающем пятнадцать глав или разделов, представляет хронологию истоков этих обновлений в армянской поэзии советского периода, отмечая, что новое отношение к лирике и прозе было необходимо, и изменения в создании лирического произведения не только укоренились, но и утвердились и, главное, принимались в среде читателей, так как отражали исторические события, национальный характер и эпоху – от вековой тоски и надежды до радости творчества и олицетворения счастливого будущего.

Особый интерес представляет учебное пособие М.Гилявана «Միմնիկական հայ պոեզիայում» («Символизм в армянской поэзии». Ереван: Авт. изд., 2018. 192 с.). В пособии привлекает внимание обращение к истокам формирования символизма как одного из видных течений модернистского направления прежде всего в литературе, культуре и разных видах искусства, со свойственными ему новаторством и экспериментом, новым видением образности и символа, с намёками, недосказанностью, таинственностью и загадочностью.

Основную часть учебного пособия составляют обширные главы о развитии армянской художественной литературы и символизме и о русском символизме и восточно-армянской поэзии. В пособии представлена структура символизма, ее уровни, художественное видение и мышление армянских авторов, отражены требования к художественному творчеству на рубеже XIX – XX века и тенденции, без формирования которых последующая национальная проза и поэзия получили бы развитие с признаками иной «пространственной характеристики» и другой «конструкции» и «структуры», так как для литературы, особенно в порубежный период, «свойственно самоосознание в понятиях взрыва и резких перемен катастрофического характера» [4. С. 595].

Следует особо подчеркнуть, что пособие, предназначенное для обучения и подготовки филологов, построено в исследовательском ключе, что еще раз раскрывает «глубоко продуманный символ» тех идей, которые отражены в работах Мартина Гарегиновича Гилявана.

Литература

1. Գիլավյան Մ., Պոեզիան ու ժամանակի շարժումը. Հոդվածներ, գրական դիմանկարներ. Երևան: Նաիրի, 2003. 168 էջ.
2. Գիլավյան Մ., Սիմվոլիզմը հայ պոեզիայում, Երևան, 2018. 192 էջ.
3. Горький А. М. Собр. соч. в 30 томах. М.: ГИХЛ, 1953. Т. 28.
4. Лотман Ю.М. Семиосфера. СПб.: «Искусство-СПБ», 2010.

Անահիտ Ամիրխանյան
Հայագիտությունը՝ որպես գրականագիտության ինտեգրման ծածկագիր
(Նվիրվում է պրոֆեսոր Մ.Գիլավյանի հիշատակին)

Անփոփում

Բանալի բառեր և արտահայտություններ. Մ. Գիլավյան, գրականագիտություն, գիրք, դասագիրք, հոդված:

Հոդվածում ներկայացվում է բանասիրական գիտությունների դոկտոր, Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի պրոֆեսոր Մ.Գ.Գիլավյանի որոշ հրապարակումների ակնարկ, նրանց դերն ու տեղը հայ գրականագիտության մեջ:

Anahit Amirkhanyan

On Armenian studies as a kind of code for the integration of literary studies
(Dedicated to the blessed memory of Professor M. Gilavyan)

Annotation.

Key words and expressions: M. Gilavyan, literary criticism, book, textbook, article.

The article presents an overview of some publications of the Doctor of Philology, Professor of the ASPU named after. Kh.Abovyan M.G. Gilavyan, their role and place in Armenian literary criticism.

ՔՆԱՐԻԿ ԱՐԲԱՆՈՒՄ

Վ. Պարտիզունու անուան հայ նոր եւ նորագոյն
գրականութեան եւ նրա դասաւանդման մեթոդիկայի ամբիոն
Բան. գիտ. թեկն, դոցենտ
spyurkka@gmail.com

**ՄԱՐՏԻՆ ԳԻՂԱԵԱՆԻ ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՅԵՏԱԳԾԻ
ՌԻՐՈՒԱԳԾՈՒՄԻ ՓՈՐՁ**

Տիրութեամբ պիտի արձանագրել այս ուշացած գնահատանքի փաստը: Ի հա՛րկէ, զգացումները հակասական են, երբ գրիչ եւ վերցնում անցեալով խօսելու դասախօսիդ, աւագ գործընկերոջդ, ի վերջոյ, տարիների մտերմութեամբ հարազատ դարձած մարդու կորստից յետոյ: Սկզբում մտածեցի գնալ դէպի ուսանողական նստարան՝ սկսելու համար ամենասկզբից, բայց հասկացայ, որ կը ստացուի պատմութիւն ոչ միայն Մարտին Գիլաւեանի, այլեւ մի քիչ ամէնքիս մասին: Թերեւս աւելի լաւ կը լինի, որ խօսքի առիթը դառնան Մարտին Գիլաւեանի գրականագիտական մտորումները: Ի վերջոյ, այս՝ «Հայագիտական հանդէս»ը, որի էջերն այսօր, ցաւօք, ուզենք կամ ոչ, արձանագրում են Մարտին Գիլաւեանի հետացումը, նրա հոգեզուական է, իսկ այդ հոգեզուակի յանձնառութիւնը հենց գրականագիտական, աւելի մեծ առումով՝ հայագիտական նուաճումների արձագանգներն են ամփոփում:

Այս գրութեամբ փորձ է կատարուել ընդհանուր գծերով երեւան բերել Մ. Գիլաւեանի գրականագիտական նախասիրութիւններն ու տեսողութեան սահմանները:

Մ. Գիլաւեանը պօտ էր, վկայ՝ պօտական նրա փորձերը, որոնք չտպագրեց ժամանակին: Մակայն գիտական հետաքրքրութիւնների ծիրում այս պօտականութիւնը, եթէ թոյլատրուած է նման ձեւակերպում, մնաց նախասիրութիւն ու մօտեցում. դա է փաստում նրա յօդուածների եւ ուսումնասիրութիւնների գերակշիռ մասի՝ բանաստեղծական նուաճումներին նուիրուած լինելու հանգամանքը, եթէ թէկուզ բաւարարուելու լինենք միայն գրքերի խորագրերի պարզ թուարկումով՝ «Ժամանակը եւ պոեզիան» (1990), «Պոեզիան ու ժամանակի շարժումը» (2003), «Վահան Տէրեանից Պարոյր Սեւակ ու մինչեւ մեր օրերը» (2017), «Միմփոլիզմը հայ պոեզիայում» (2018): Այս առումով բնութագրական ենք դիտում Գուրգէն Մահարու պոեզիայի վերաբերեալ դիտարկումը, որ խորքի մէջ ինքնախոստովանանքի նման է հնչում. «...Ով ներս է մտել պոեզիայի կախարդական դռներից, ով երբեւէ բանաստեղծական յայտնութեան սարսուռն ու դողն է զգացել իր հոգում, չի կարող հենց այնպէս հեռանալ

նրանից: Բանաստեղծությունն առաջին սիրոյ նման է. կարող է կուտ գնալ, կարող է անթեղուել, ծխալ անկրակ, բայց չի կարող մարել»¹: Եւ պատահական չէ նաեւ, որ նրա ուսումնասիրությունների տուտը բացում է 50-60-ականների, այսինքն՝ իրեն անմիջապէս նախորդած սերնդի բանաստեղծական նկարագրի բացայայտման յանձնառութեամբ:

Մ. Գիլաւեանը տիրապետում էր նաեւ ռուս գրականութեանը, իսկ սաօգնել է աւելի համապարփակ ու խորքային տեսնել գրականութեան մէջ տիպաբանական առընչությունները, պոեզիայի սահմանները որոշելիս ազգային ու համամարդկային յարաբերակցությունը: Նման դատողությունների հիմնաւորման լաւագոյն օրինակներից մէկը նա «Բացատրել է» Պարոյր Սեւակի օրինակով²: Եւ բոլորովին էլ երկրորդական հանգամանք չէ, որ Մ. Գիլաւեանը Պ. Սեւակի ու 60-ականների գրական սերնդի մասին տարիներ շարունակ մագիստրոսական դասընթաց է վարել:

Մեզ համար Գիլաւեանի տեսողութեան մէջ կարեւորներից է գրականութեան պատմութեան հանգրուաններում աւանդոյթի եւ նորարարութեան սահմանագծերի տեսողությունը: Օրինակ՝ երբ փորձում էր վերբերել 50-60-ականների բանաստեղծութեան յատկանիշները, արձանագրում էր, որ «մի շարք հոսանքներ եւ ուղղություններ, յատկապէս սիմվոլիզմը, որոշակի նստուածքներ են թողել... Պ. Սեւակի, իսկ որոշ կողմերով՝ նաեւ Հ. Սահեանի ստեղծագործություններում: ...Նրանց ստեղծագործություններում կան խորհրդապաշտական մտածողութեանը եւ գեղարուեստական փորձին բնորոշ տարրեր՝ դէպի խորհրդաւորն ու անյայտը ձգտելու եւ անհունի գաղտնիքներին հաղորդակցուելու ընդգծուած միտումներ, ...ակնարկություններով ու կիսաշշուկներով տրամադրություններ արտայայտելու յաջողուած փորձեր»³:

Իսկ սիմվոլիզմը պատահականութիւն չէր Մ. Գիլաւեանի հետաքրքրությունների դաշտում. 1982-ին պաշտպանած թեկնածուական աշխատանքը կրում էր «Ռուսական սիմվոլիզմը եւ արեւելահայ պոեզիան» խորագիրը:

Պոեզիայի շարժման ու զարգացման տրամաբանութեան արձանագրման մէջ գրականագէտի համար ոչ երկրորդական հանգամանք պիտի լինի նաեւ խնդրոյ առարկայ հեղինակների մասին որոշակի հեռաւորութեան վրայ ասուած խօսքը, որտեղ անվերապահ հիացումը չի կարող որոշիչ դառնալ.

¹ Գիլաւեան Մարտին, Վահան Տէրեանից Պարոյր Սեւակ ու մինչեւ մեր օրերը, Եր., 2017, էջ 66:

² Տե՛ս՝ Գիլաւեան Մ., Ժամանակը եւ պոեզիան, Եր., 1990, էջ 98-99:

³ **Նոյն տեղում**, էջ 101:

այդպիսի օրինակների հանդիպում ենք Գեորգ Էմինի, Համօ Սահեանի, Հրաչեայ Յովհաննիսեանի առիթներով: Եթե նոյն արդարամտությամբ մօտենայու լինենք արդեն իր մօտեցումներին, ապա պիտի նկատել, որ առաել խորը քննաբանուած են Պ. Սեւակը, Հ. Սահեանը, Վ. Դաւթեանը, ապա նոր Ս. Կապուտիկեանը, Հր. Յովհաննիսեանը, Ս. Մարգարեանը, ինչը նոյնպէս վերաբերմունքի եւ արժեւորման հարց է:

2003-ին լոյս տեսաւ Ս. Գիլաւեանի «Պոեզիան ու ժամանակի շարժումը» յօդուածների հաւաքածուն, ուր տեղ էին գտել նախորդ մէկ-երկու տարուայ ուսումնասիրութիւնները: Այս ժողովածուն նախադէպը դարձաւ 2017-ին հրապարակ հանած «Վահան Տէրեանից Պարոյր Սեւակ ու մինչեւ մեր օրերը» աւելի ստուար ժողովածուին, որն ամփոփում է տարբեր տարիներին ու տարբեր առիթներով գրուած ուսումնասիրութիւններ, յօդուածներ եւ գրախօսութիւններ: Ուշագրաւ է «Հէդիսակի կողմից» ուղղորդող խօսքը, որտեղ նշում է, որ յօդուածները խմբագրական միջամտութիւնների չեն ենթարկուել, քանի որ «որոշակի պատկերացում են տալիս կոնկրետ ժամանակների գրականագիտական ու քննադատական մտքի զարգացումների վերաբերեալ»⁴: Լաւ կը լինէր, որ նշուէին թուականները՝ ստուածն աւելի տեսանելի դարձնելու համար:

Այս ժողովածուի վերնագրում Վահան Տէրեանի ու Պարոյր Սեւակի անունների վկայակաչումն արդէն հաստատում էր ուրուագծումը, որ բերում էր Ս. Գիլաւեանը 60-ականների եւ դարասկզբի գրական աւանդոյթների միջեւ կապը բացատրելիս: Այդ ճանապարհի իւրօրինակ արձանագրումն է նաեւ նոյն գրքում «Սովետահայ պոեզիայի կէտարեայ ուղին» խորագրով գրախօսականը, որ վերաբերում է «Հայ սովետական պոեզիայի պատմութիւն (1920-1970)» գրքին: Մրան իբրեւ շարունակութիւն կարելի է դիտել 60-80-ականների դէմքերին՝ Ռազմիկ Դաւոյեան, Արեւշատ Աւագեան, Հրաչեայ Սարուխան, Հրաչեայ Թամրագեան, Սուրէն Այվագեան, Վարդգէս Պետրոսեան, նուիրում յօդուած-ուսումնասիրութիւնները: Այս շարքում յատկապէս ուշագրաւ տեսաբանական դիտարկում կարելի է նկատել Հր. Թամրագեանի առիթով հնչեցրած միտքը, թէ բանաստեղծին հասկանալու համար «որոշակի մտաւոր մակարդակ եւ կենտրոնացում է անհրաժեշտ»՝ սա իբրեւ ընդհանրացում տարածելով սերնդի վրայ. «Վերջին տասնամեակի մեր պոեզիան (խօսքը 1990-ականներին է վերաբերում – Բ.Ա.), յանձինս մի խումբ բանաստեղծների (Հ. Էդոյեան, Ա. Մարտիրոսեան, Յ. Գրիգորեան, Հ. Սարուխան, Է. Միլիտոնեան եւ ուրիշներ), վաղուց է

⁴ **Նոյնը**, Վահան Տէրեանից Պարոյր Սեւակ ու մինչեւ մեր օրերը, Եր., 2017, էջ 3:

դուրս եկել անորոշության ծանծաղուտներից ու գնում է գեղարուեստական որոնումների ճիշդ ճանապարհով»⁵:

Գանք Մ. Գիլաւեանի կենդանութեան ժամանակ մեզ հասած վերջին դրուագին՝ «Միմվոլիզմը հայ պեղիայում» գրքին (2018), որ խորքի մէջ վերադարձ էր առաջին սիրուն՝ սիմվոլիզմին, որտեղ ի մի են բերուած նրա գիտական եզրայանգումները ուղղութեան գեղագիտութեան, դարասկզբի գրական շարժումների եւ նրանցում սիմվոլիստական մտածողութեան արժարժումների, եւրոպական եւ ռուս սիմվոլիստների, արեւմտահայ եւ արեւելահայ պեղիայի հետ նրանց առընչութիւնների վերաբերեալ (Թէքէեան, Մեծարենց, Սիամանթօ, Դերենիկ Դեմիրճեան, Աւետիք Իսահակեան, Վահան Տէրեան, Եղիշէ Չարենց եւ ուրիշներ), ուր սահմանուում էին ե՛ւ ազդեցութիւնների շրջանակը, ե՛ւ ինքնուրոյնութեան տարրերը⁶:

Իսկ վերոնշեալ «մեզ հասած» արտայայտութիւնը վերաբերում է գիտնականի՝ Մերօ Իսանգաղեանին վերաբերող եւ անաւարտ մնացած ուսումնասիրութեանը, գուցէ եւ զգրոցներում մնացած այլ յօդուածների ու բանաստեղծութիւնների, որոնց լոյսընծայումը կարող է նոր լոյս սփռել Մարտին Գիլաւեանի գիտական կենսագրութեան վրայ:

⁵ Նոյն տեղում, էջ 229:

⁶ Տե՛ս՝ **Նոյնը**, Միմվոլիզմը հայ պեղիայում, Եր., 2018, էջ 90-93:

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մարտին Գիլավյանի խոսքը մշտապես զուսպ էր ու սեղմ, բայց մի քանի բառով այնքան գեղեցիկ ու պատկերավոր էր արտահայտում իր ասելիքը: Ես նրա 20-րդ հայցորդն եմ, ում գիտական ուղին նա հունի մեջ դրեց և ուղղորդեց Ռուբեն Հովսեփյանի գրականության հանդեպ գրական աշխարհայացքս ու գիտական պրպտումներս: Բավական է մի փոքր մեջբերում անել՝ ստենախոսությանս պաշտպանության ժամանակ նրա ելույթից հասկանալու համար՝ ինչպես էր նա արժևորում աշխատանքը. «Պետք է ընդգծել, որ ստենախոսությունը գրված է խիստ գրական հայերենով և նյութի գերազանց իմացությամբ, որը, ինչպես Հրանտ Մաթևոսյանը կասեր, հայցորդին գրիչ բռնելու հնարավորություն է ընձեռում: Արժևորումը թողնում եմ Ձեր հայեցողությանը»:

Ցավոք, նա այսօր մեր կողքին չէ, և ես, ինձ վերապահված գրիչ բռնելու հնարավորությամբ, Հայոց եղեռնի մեծ երգիչ Միամանթոյի ստեղծագործությունների մասին գիտական պրպտումներս նվիրում եմ իմ գիտական ղեկավար՝ Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մարտին Գիլավյանին՝ մեծագույն ու նաև ինչ-որ տեղ ուշացած երախտագիտությամբ:

ՄԻԱՄԱՆԹՈՒ. «ԵՍ ԵՐԳԵԼՈՎ ԿՈՒԶԵՄ ՄԵՆՆԻԼ»

Ամփոփում

Արևմտահայ բանաստեղծ Միամանթոն Հայոց ցեղասպանության մեծ երգիչն է: Նրա ողջ ստեղծագործությունը լեցուն է արյունոտ եղեռնի պատկերներով, հայ ժողովրդի գոյամարտի հերոսական դրվագներով: Նա դարձավ իր իսկ պատկերած եղեռնի զոհը, մեռավ՝ երգը շուրթերին:

Բանալի բառեր և արտահայտություններ. արևմտահայ իրականություն, տառապանք, պայքար, արյունոտ երգեր, հոգեվարքի ու հույսի ջահեր, կոտորած, եղեռն, հոշոտել, հայի ճակատագիր, մաքառում, հաղթանակ:

«...Մահահոտ ու արյունաներկ գրականություն՝
հայկական ճակատագրի պես»

Վիշտը ակոսներ բացեց նրա հոգում, իսկ տառապանքը ցանեց պայքարի սերմեր: Նրա մեծ տառապանքը ծնվեց մեծ ցավից ու ահագնացավ օրերի հետ: Ի վերուստ սահմանված ճակատագրով մեծ հայրողի

Միամանթոն՝ Ատոմ Յարճանյանը, իր «ազատածուփ» քնարով կոչված էր «մոռացումներու մոխիրին» մեջ պատանքել սերը, «երկինքներու անդորրական կապույտը» և հնչեցնելու ժողովրդի ու սեփական ցավից ծնված արյունոտ երգերը: Նա պիտի դառնար իր ժողովրդի հոգեվարքի ու հույսի ջահակիրը, որ «քանդակեր տառապանքը դարերուն համար», իսկ նրա զգայուն սիրտը պիտի վառվեր ու հար մխար սերունդների հիշողության մեջ:

Բանաստեղծի ապրած ժամանակաշրջանը զուգադիպեց սուլթան Համիդի արյունոտ բռնակալությանն ու երիտթուրքերի ոճրագործ քաղաքականությանը՝ ավարտվելով 1915 թվականի ահավոր ջարդերով ու տեղահանությամբ:

895-1908 թվականները արևմտահայ իրականությանը բերին վիշտ ու տառապանք, որն արտահայտվեց գրականության մեջ: Արևմտահայ իրականությունն իր զարգացման վերջին տասնամյակում փայլեց տաղանդավոր բանաստեղծների համաստեղությամբ՝ Վահան Թեքեյան, Միսաք Մեծարենց, Դանիել Վարուժան, Ռուբեն Սևակ, Ռուբեն Որբերյան և ուրիշներ: 80-ականների գրական սերունդը դեռ որոնումների մեջ էր, երբ Միամանթոն բերեց իր ուրույն քնարերգությունը՝ ծնված արյունից ու տառապանքից: Դեգերումները հայրենիքից դուրս՝ Եգիպտոս, Փարիզ, Ժնև, և նյութական զրկանքը կռեցին նրա մեջ հայորդու ազնիվ հավատ և խտացրին դարերի վրեժը:

1896 թվականից սկսվում են որոնումները կյանքի տարբեր ճանապարհներին:

Նրա ստեղծագործության արյունոտ ուղին բացվում է առավել արյունոտ բանաստեղծությամբ: Գիշերվա մեջ բարձրացող արյան ալիք, մորթված սերունդներ փողոցի մեջ, հրդեհվող քաղաքներ ու մարմարի ծանրությամբ իջնող ձյուն, մեռելների ծանրությունից կարմիր ալիքների վրա գալարվող նավ... Էլ ինչպես չաղաղակեր բանաստեղծը.

*Օ՛, պատուհանները փակեցեք ու աչքերնիդ ալ,
Կոտորած, կոտորած, կոտորած...*

Ստեղծագործ մտքի տաղանդավոր փայլատակումները տպագրվում են «Վաղվան ձայնը», «Անահիտ», «Ազատամարտ», «Բանբեր», գրականության ու արվեստի այլ պարբերականներում: Նրա տաղանդը շուտով կնքվեց «բոցավառ», «հազվագյուտ» անուններով: Նա եղավ պատմության ամենամոայլ շրջանի ներկայացուցիչը: Առաջին ժողովածուն լույս տեսավ 1901 թվականին: Այստեղ Միամանթոն մատնանշում է ժողովրդի ճանապարհը, որ հույսի ճամփան է, ավերակների քառուղի, որի վրա մարդն է՝ «շրթունքները դեպի ցավը կարկառած», վերք դարձած նայվածքներ: Բայց մաքառումի ու ակնկալության օրերի մեջ Հույսի

ճամփաները բացելու համար անհնար է չբախվել Մահվան հետ, որպեսզի Երազի վերք դարձած նայվածքներ: Բայց մաքառումի ու ակնկալության օրերի մեջ Հույսի երիվարները Հաղթանակի կատարների վրա արձանանան: Եվ դեռ մայրերը պիտի դյուցազունների կարմիր երկունքը ապրեն: Բանաստեղծը օրինում է արհավիրքի պատրաստ եղբայրների աստվածացումը, ճակատագրի միջից տեսնում է արշալույսը, որ հաղթանակ է բերելու վաղորդայնի միջով:

Հզոր շնչով էր գրված «Դյուցազնորեն»-ը, որ Արշակ Չոպանյանը գնահատեց որպես «ամենեն հզոր տեսիլքներեն մինն...»:

Սիամանթոն մեր օրերի պատգամախոսն է, նրա ստեղծագործությունն առաջին տեսրակից՝ «Ցավերուն ցավերից»-ից մինչև վերջ ներծծված է հայ ժողովրդի գոյամարտի հերոսական դրվագներով:

«Դյուցազնորեն»-ը ժամանակի և տարածության կոնկրետ դրսևորումն էր՝ միաժամանակ հյուսված երևակայության վառ գույներից: Այն բերում էր ազգային ու

համազգային գծեր, միաժամանակ հնչեցնելով գալիք ողբերգության տագնապի փողը:

Սիամանթոն գրում է «Հայորդիներ»-ի երեք շարքերը (1905, 1906, 1908), «Դյուցազնորեն»-ում երևացող մտապատկերները տեղի են տալիս իրականությանը: Բանաստեղծի բերանով խոսում է իմաստնացած հայորդին՝ «Իմ անունս է Պայքար և վախճանս Հաղթանակ»: Բանաստեղծը հավաստում է իր ասելիքը՝ «Եթե կուզեք որ դաժան խղճի խայթը ձեզ ամենուն առջև գերեզմաններ չի փորե...», ապա՝ ճակատներդ բոլոր բախումների և բազուկներդ ըմբոստացումի երկաթեղեն հովերուն կարկառեք: Մա հայորդիների պատգամն է: Այս գաղափարով են շնչում շարքի բոլոր բանաստեղծությունները:

Զարկ, Կովկաս՝ հնչեցրեց Սիամանթոն 1905թ.-ին՝ ցարիզմի դեմ բորբոքված զայրությով: Հիրավի, մեղքի բաժին է հասել, «անարգ ճակատագիր» և այն պիտի ջախջախել այնպես, որ հարվածի շոինդը թնդա մինչև «Հայրենիքին խորքերը»: Զարհուրելի անցյալ և ահավոր ներկա՝ ահա որբերի ճակատագիրը, մինչդեռ ջրաղացի սպիտակ ձայնը ճերմակ աղոթքի նման հնչում է նրանց սրտերում, ովքեր անոթի են: Պետք է ըմբոստանալ «կախադաններու կատարեն» անգամ, իսկ հայոց ճակատագիրը օծվի միայն առաքյալների սուրբ արյունով:

Իրականության ահեղ վերապրումներից խտանում է «Հոգեվարքի և հույսի ջահեր» շարքը, որ տպագրվում է 1907 թվականին Փարիզում: Վրեժի կոչն ու մաքառման երգը փոխվում են ցավագին ու հակասական մտորումների: Արևմտահայ իրականությունը խարխափում էր մթնում, երբ Սիամանթոն բերեց իր խոսքը: «Մերունդը թեն հոգեվարքի մեջ է, բայց չի

մարելու հույսի ջահը... Հայորդիները դյուցազնորեն կոեր էին հաղթանակներ, մաքրելով հայ հոգին ստրկության թույնեն և Ցեղին ճակատը՝ վատության խարանեն, բայց կեղեքումը կմնար կեղեքում, տառապանքը՝ տառապանք, կարյունեին հոգեվարքի ջահերը, հակառակ որ հոն հորիզոնին վրա կհամառեին նշողիլ ջահերը դարավոր հույսին», - գրում էր Վարուժանը:

Բանաստեղծն իր ժողովրդի հետ է: Նա մերթ ապրում է հանգստի իրիկուն, մերթ՝ «ավերումի գիշեր մը», հիշատակների անդրջիրիմյան աղաղակների մեջ երկփեղկվում է բանաստեղծի հոգին, իզուր է փորձում խույս տալ արյունից.

*Վասնզի գիտեմ, որ բոլոր արշալույսները նվիրական հողին
Տարիներե՛ ի վեր, մեր արյունեն են կարմիր...:*

Արցունքով աղերսում է «ափ մը մոխիր» հայրենիքից, կարոտը թանձրանում է ու մոկտում՝ «արյուն է որ կտեսնեն», բայց արյունի մեջ անգամ բերում է ասպետի երգը, որ շեփոքում է՝ «Ես երգելո՞վ կուզեմ մեռնիլ»:

Այո, երգն է, որ պիտի պահի ինքնությունն ու փրկի կործանման եզրին կանգնած ժողովրդին, երգն է, որ սերունդներին պիտի տանի դարերի վրեժը, երգն է, որ պիտի բորբոքի պայքարի հուրը և ճանապարհ բացի հույսի ու գաղափարի:

համար: Եվ այսպես, հույսի ու գաղափարի միջով քայլում է «զգայուն ու ներհուն» անհատը Երիտթուրքերի 1908 թվականի հուլիսյան սահմանադրությունը սարսափելի աղետներ բերեց տառապանքից զուխը կորցրած ժողովրդին. այն, ինչ չհասցրեց անել սուլթան Համիդը 30 տարվա մեջ, արեցին երիտթուրքերը: Կրկնվող ջարդերը ահավոր էին իրենց թողած հետևանքներով, բայց Եվրոպան փակեց աչքերը ազգային աղետի առաջ:

«Հոգեվարքի ջահերը մարեցան այլևս», և բանաստեղծը սրտի արյունով գրեց «Կարմիր լուրեր բարեկամես»: Մեր աչքերի առաջ հասունանում է հայկական ցեղասպանության արյունոտ ծրագիրը, որ ծարավի է հայի արյան:

Միամանթոն ոչ միայն կարողացավ տալ թուրքական ջարդերի արյունոտ նկարագիրը, վերլուծեց՝ հանգելով փիլիսոփայական խոր ընդհանրացումների:

Թեկուզև հայկական դանթեականի ճանապարհին արյունաքամ է լինում անմեղ ժողովուրդը, բայց «մեր խիղճը հանդարտ է, իսկ մեր արյունը պիտի հաղթանակի»:

Ինչ էլ երգի բանաստեղծը՝ դյուցազնորեն կովողների հոգու գեղեցկությունը, թե հայորդիների ազնիվ պայքարը, անվերջ բորբոքվող հոգեվարքի ու հույսի ջահերը, թե կարոտի թախիծն ու եղեռնի սարսափը,

դավանանքը նույնն է՝ «Արդարությունը ստեղծել պետք էր և ազատությունը մոլեգնաբար հափշտակել»:

Սա տառապած ժողովրդի բարոյական նկարագիրն է ու դարերի պատգամը՝ սերունդներին ի պահ:

Վերհարնի, Մետերլինկի, Հանրի դը Ռենիեի ազդեցությունը կրած բանաստեղծը փորձում էր գտնել իր էության արմատները: Իսկ այդ արմատները հայրենի Ալկնի ժողովրդական հմայիչ երգերի մեջ են: Նա ռոմանտիզմի ու սիմվոլիզմի տարրերին շաղախեց անսահման հույզը՝ մեծագույն նրբությամբ բացելով ճշմարտությունը, որ վեր է ամեն ինչից:

Ամայացած հայրենիքի գավակները բռնել էին գաղթի ճանապարհը՝ Առաքյալներին: Տասներկու կարմիր լուրերին ի պատասխան՝ Միամանթոն բերում է նույնքան կարոտի երգ, որոնք թախծի երանգ ունեն ու վերադարձի հավատ: Բանաստեղծը կերտում է հայրենի հողի ու մարդկան հոգու սիմֆոնիան, ժողովրդի գոյատևման ռիթմը:

1909 թվականի Կիլիկիայի ջարդերը ծանր մտածումների մեջ գցեցին նրան: Բանաստեղծը հղացավ «Բնության լացը», որի միայն առաջին եղերերգը գրվեց («Միհուն»): Կարելի էր հոգու վերջին ճիչերը եղան «Վերջին իրիկուններ», «Չարչարանքի տեսիլներ», «Մուրբ Մեսրոպ» գործերը, որ գրվեցին 1911-1914 թվականներին: Կատարելության ձգտումով, հոգու անմեղ տվայտանքներով նա թերևս հիշեցնում է մեծն Նարեկացուն:

Միամանթոն չհասցրեց ասել իր վերջին խոսքը, նրա տաղանդը դեռ պիտի բռնկվեր արևային նոր գույներով, անկատար մնացին շատ մտահղացումներ:

Նրան հոշոտեցին իր երագանքի ճանապարհին, հոշոտեցին նաև մի ողջ ստեղծագործ սերունդ, բայց բանաստեղծն այսօր էլ իր հոգու լույսն է բերում իր ժողովրդին, իր ստեղծագործություններով նորովի հաստատելով արյուն տեսած ժողովրդի հավարժության գաղափարը:

Եվ ինչպես Մերգեյ Սարինյանն է փաստել. «...նրան այլ ճակատագիր չէր վիճակված, քան դառնալ իր իսկ պատկերած եղեռնի գոհը: Ու քանի դեռ կա եղեռնի հուշը, ցեղի արյան կանչը և Հայ Դատը մեր ազգային գոյության պատմական հեռանարում, Միամանթոյի անունը կմնա որպես մեր արիական ոգու խորհրդանիշ»:

Օգտագործած գրականություն

1. Գր. Զոհրապ, Միամանթո, Ընտիր երկեր, Եր., 1957, էջ 5
2. Միամանթո, Երկեր, ՀԴԳ մատ., ԵՒ., 1979, էջ 84
3. Հր. Թամրազյան, Միամանթո, Եր., 1964, էջ 37, 38, 87, 94, 103, 36
4. Հ. Ռշտունի, Միամանթո, Եր., 1970, էջ 192

5. ՀՆԳՊ, հատոր 5, 1979, էջ 484
6. Ս. Սարիյան «Հեղափոխության Նարեկը»

Сирвард Асрян

Տիամանտո: «Я С песней умереть желаю»

Заклучение

Ключевые слова и выражения: западноармянская действительность, страдание, борьба, кровавые песни, угасание и проблески надежды, резня, геноцид, истерзанность, судьба армян, самоотверженная борьба, победа.

Западноармянский поэт Тиаманто – великий певец Геноцида армян. Его произведения преисполнены кровавыми сценами резни, а также самоотверженной борьбы армянского народа. Судьба Тиаманто сложилась так, что сам он стал жертвой Геноцида, о котором писал: поэт погиб с песней.

Sirvard Asryan

Conclusion

Key words and expressions: Western Armenian reality, suffering, struggle, bloody songs, torches of agony and hope, carnage massacre, to lacerate, fate of Armenians, struggle, victory.

Distinguished Western Armenian poet Siamanto was a great singer of the Armenian Genocide. His work is full of images of the bloody “Medz Yeghern” (Genocide) and heroic episodes of the struggle for the existence of the Armenian people. He became a victim of the Yeghern he had portrayed and died with a song on his lips.



ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻ

ԱԵԼԻՏԱ ՂՈԼՈՒԽԱՆՅԱՆ Նա անսահման կենսասեր էր	5
ՍՈՒՐԵՆ ԴԱՆԻԷԼԵԱՆ Բայց հաւատա՞նք, որ թեթեւ էր կեանքդ ու խնդում, սիրելի՛ Մարտին...	7
ՊԵՏՐՈՍ ԴԵՄԻՐՃՅԱՆ Նրա վաստակն ու գործը կշարունակեն ապրել	10
ՄԵԼԻՆԵ ԳԻԼԱՎՅԱՆ Ինձ բացակա չղնեք	11
ԱՐՄԻՆԵ ՄՈՒՐԱԴՅԱՆ Հուշի պատառիկներ	15
ԼՈՒՍԻՆԵ ԳԱԼՍՅԱՆ	17
ԱՆԱՀԻՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ափսոսանքի խոր զգացումով	19
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԳՍՅԱՆ Հաճելի հիշողություններ	20
ՆԵԼԼԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ «Քեզ հետ ու առանց քեզ»	24

**ՀՈՂՎԱԾՆԵՐ՝
ՆՎԻՐՎԱԾ ՊՐՈՖԵՍՈՐ ՄԱՐՏԻՆ ԳԻԼԱՎՅԱՆԻ
ՀԻՇԱՏԱԿԻՆ**

ИННА САРКИСЯН, КРИСТИНА МУРАДЯН Антропоцентрический подход к лексикографии как веяние времени	27
АНАИТ АМИРХАНИЯН Об арменоведческих исследованиях как своеобразном коде интеграции литературоведения	33
ՔՆԱՐԻԿ ԱԲՐԱՀԱՍՅԱՆ Մարտին Գիլաւեանի գրականագիտական յետազօծի ուրուագծումի փորձ	36
ՄԻՐՎԱՐԴ ԱՍՐՅԱՆ Միամանթո. «Ես երգելով կուզեմ մեռնիլ»	40